2213 14.04

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար

Համբարձում Մաթևոսյան

«01» 04 2026թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 038 - 26

Նախաձեռնող՝ *«ԷՄ ՋԻ ՓԻ ՌԵՍՈՒՐՍԻԶ» ՍՊԸ*

Գործունեությունը՝ Ոչ մետաղական օգտակար հանածոյի արդյունահանում
Արարատի մարզ, Մասիս համայնք, Նորամարգ բնակավայր

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 038 - 26

«01» մարտի 2026թ.

Նորամարգի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի Ռեսուրս տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ԷՄ ՋԻ ՓԻ ՌԵՍՈՒՐՍԻԶ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման /ՇՄԱԳ/ հաշվետվություն
Գործունեության տեսակը՝	«Ա» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Արարատի մարզ, Մասիս համայնք, Նորամարգ բնակավայր

Ներածական մաս. «ԷՄ ՋԻ ՓԻ ՌԵՍՈՒՐՍԻԶ» ՍՊ ընկերության կողմից նախատեսվում է իրականացնել Նորամարգի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի Ռեսուրս տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքներ:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի 2)-րդ կետի թ. ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Վարչական տեսակետից Նորամարգի ավազակոպճային խառնուրդի (ԱԿԽ) հանքավայրի Ռեսուրս տեղամասը գտնվում է Արարատի մարզի Մասիս համայնքի Նորամարգ բնակավայրի տարածքում՝ բնակելի գոտուց մոտ 0.8 կմ հարավ-արևմուտք, Մեծամոր և Հրազդան գետերի միջև, զբաղեցնում է 13.9 հա մակերեսով տարածք:

Տեղամասի մոտակա բնակավայրերն են՝ Հովտաշենը, Նորամարգը, Մխչյանը, Արաքսավանը ու Մասիս քաղաքը:

Տեղամասը մոտ 6.5 կմ երկարությամբ բարեկարգ ավտոճանապարհով կապված է Երևան-Արտաշատ-Արարատ մայրուղու հետ, իսկ Երևանի հետ՝ (25 կմ) Հյուսիս-Հարավ միջպետական ավտոմայրուղով:

Տեղամասի կենտրոնի աշխարհագրական կոորդինատներն են՝
- հյուսիսային լայնությունը՝ 40°1′14.74″
- արևելյան երկայնությունը՝ 44°24′4.94″

Գեոմորֆոլոգիական տեսակետից տեղամասի շրջանն իրենից ներկայացնում է Արարատյան դաշտավայրի հարավ-արևելյան մասը կազմող հարթավայր:

Երկրաձևաբանական տեսակետից տեղամասի տարածքն իրենից ներկայացնում է Արարատյան դաշտի հարավ-արևելյան մասը կազմող հարթավայր, գտնվում է 823.0-826.2 մ

բացարձակ բարձրությունների վրա:

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Արարատյան արտեզյան ավազանի կենտրոնական մասում և սահմանափակվում է Մեծամոր և Հրազդան գետերով:

Տեղամասի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են ժամանակակից դե-լյուվիալ-պրոլյուվիալ առաջացումները և ալյուվիալ ավազային նստվածքները, ինչպես նաև Արարատյան դաշտավայրի ստորին լճային դարավանդի վերին չորրորդականի կավային առաջացումները:

Նորամարգի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի Ռեսուրս տեղամասը կապված է Արաքս, Մեծամոր գետերի և նախկինում գոյություն ունեցած Կապույտ լճի ժամանակակից նստվածքային առաջացումների հետ: Տեղամասում առկա են գետային և լճային նստվածքների կուտակումներ:

Նորամարգի ԱԿԽ հանքավայրի Ռեսուրս տեղամասի տարածքում սողանքներ, կարստեր և փլուզումներ չկան, տարածքում քարաթափումներ և սողանքների առաջացում չեն դիտարկվում:

Նորամարգի ԱԿԽ հանքավայրի Ռեսուրս տեղամասում ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բույսեր և կենդանիներ չեն հայտնաբերվել: Հայցվող տեղամասի տարածքը, ինչպես նաև հարակից շրջանները ներառված չեն բնության հատուկ պահպանվող տարածքում, պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ առկա չեն:

Հայցվող տարածքում չկան լցակույտեր, ենթակառուցվածքներ, հանված, պահեստավորված, պահպանված հողաբուսական շերտեր:

Նախատեսվող գործունեության տարածքում բուսականությունն աղքատ է, մասմաբ ջրավորված՝ առկա են վերգետնյա ջրավազաններ, լճակներ, որոնք տարվա տաք եղանակներին և առուների մաքրման դեպքում գրեթե չորանում են:

Տեղամասը շրջապատված է ջրհեռացման դրենաժային առուներով, որոնք գտնվում են 10-250 մ հեռավորությունների վրա, տեղամասը հեռու է գետային հոսքերից, անմիջական ազդեցության տակ է գտնվում գրունտային ջրերի հորիզոնը, որը բեռնաթափվում է Արաքս գետում:

Նորամարգի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի Ռեսուրս տեղամասի պաշարները հաստատվել են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նորամարգի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի Ռեսուրս տեղամասի պաշարների հաստատման մասին» 23.08.2024թ. N 1948-Ա հրամանով, կազմակերպել «Խիճ և կոպիճ խիտ լեռնային ապարներից շինարարական աշխատանքների համար» 8267-95 ՀՍՏԳՕՍՏ–ի տեխնիկական պահանջներին համապատասխանող խճի ու «Ավազ շինարարական աշխատանքների համար» 8736-2014 ԳՕՍՏ–ի պահանջներին համապատասխանող ավազիշահութաբեր արտադրություն:

Նորամարգի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի Ռեսուրս տեղամասի ավազները լիովին բավարարում են «Ավազ շինարարական աշխատանքների համար» 8736-2014 ՀՍՏ ԳՕՍՏ-ի պահանջներին և կարող են օգտագործվել, որպես լցանյութ շինարարական շաղախներում, ծանր բետոններում և այլ տեսակի շինարարական աշխատանքներում:

Նորամարգի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի Ռեսուրս տեղամասի հաստատված պաշարների եզրագծի ծայրակետերի կոորդինատները հետևյալն են՝

	X	Y		X	Y
1.	4431889.6	8448635.3	9.	4432064.1	8449109.6
2.	4432139.4	8448682.6	10.	4432046.6	8449115.1
3.	4432322.6	8448712.0	11.	4431949.2	8449066.0

4.	4432328.4	8448712.9	12. 4431861.0	8449010.7
5.	4432129.8	8448891.8	13. 4431851.4	8448805.2
6.	4432167.2	8449085.2	14. 4431857.2	8448771.8
7.	4432154.9	8449112.4	15. 4431871.7	8448702.6
8.	4432132.7	8449110.8		

Նորամարգի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի Ռեսուրս տեղամասի լեռնա-երկրաբանական և լեռնատեխնիկական պայմանները բարենպաստ են բաց եղանակով մշակման համար:

Նախատեսվող բացահանքը վերջնական դիրքում կունենա հետևյալ պարամետրերը՝

- բացահանքի առավելագույն երկարությունը մակերևույթում՝ մոտ 445.6 մ,
- բացահանքի առավելագույն լայնությունը մակերևույթում՝ մոտ 442.3 մ,
- մշակվող օգտակար հանածոյի հաստաշերտի միջին հզորությունը՝ 3.1 մ,
- հանքաստիճանի թեքման անկյունը՝ 45°,
- բացահանքի առավելագույն խորությունը՝ մոտ 5.6 մ,
- բացահանքի համար օտարման ենթակա մակերեսը՝ 13.9 հա:

Բացահանքի տարեկան արտադրողականությունը կկազմի 27000 մ³/տարի ավազակոպճային խառնուրդի զանգված, օգտակար հանածոյի կորզվող պաշարները բացահանքի վերջնական եզրագծերի սահմաններում՝ 409102 մ³:

Տեղամասի շահագործումը նախատեսվում է իրականացնել համատարած երկայնական մեկ կողանի մշակման համակարգով՝ օգտակար հանածոյի ամբողջ հզորությամբ՝ մեկ հանքաստիճանով՝ ներքին և արտաքին ժամանակավոր լցակույտառաջացմամբ, առանց հորատապայթեցման աշխատանքների:

Նորամարգի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի Ռեսուրս տեղամասի շահագործման նպատակով բացահանքային դաշտի բացումը նախատեսվում է իրականացնել տեղամասի արևմտյան մասից՝ հաստատված պաշարների եզրագծի ամբողջ ճակատի երկարությամբ և շահագործել մեկ անգամից հաստվածքի ամբողջ խորությամբ՝ հակառակ բահով կահավորված էքսկավատորի միջոցով:

Ավազակուտակի շերտի հզորությունը տատանվում է 2.0-4.1 մ սահմաններում, որը ծածկված է 1.7-3.0 մ հաստությամբ հողաբուսական, կավային, կավավազային առաջացումներով, որը թույլ է տալիս օգտակար հանածոյի արդյունահանումն իրականացնել առանց նախնական փխրեցման:

Նախատեսվող բացահանքի մշակման համակարգի տարրերը կլինեն հետևյալը՝

- աստիճանի բարձրությունը՝ մինչև 5.1-6.1 մ,
- աշխատանքային հրապարակի նվազագույն լայնությունը՝ 15 մ,
- հանքաստիճանի աշխատանքային ճակատի երկարությունը՝ 100 մ:

Լեռնակապիտալ աշխատանքների (բացահանքի շինարարական շրջանի) ընթացքում նախատեսվում է տեղամասի եզրագծի սահմաններից դուրս՝ հարավ արևելյան մասում արտադրական հրապարակի ստեղծում, ջարդիչ-տեսակավորող կայանքի կահավորում:

Տեղամասի սահմաններից դուրս՝ հյուսիս արևելյան մասում, նախատեսվում է ժամանակավոր արտաքին լցակույտի ձևավորման աշխատանքների իրականացում:

Ինչպես տեղամասի սահմաններում, այնպես էլ տեղամասի սահմաններից դուրս առկա են գործող ավտոճանապարհներ, այդ իսկ պատճառով հանքավայրի լեռնակապիտալ աշխատանքների կատարման շրջանում ավտոճանապարհների անցկացման գործընթաց չի նախատեսվում:

Տեղամասում առկա են ջրավորված տարածքներ, որոնցից օգտակար հանածոյի արդյունահանումը նախատեսվում է իրականացնել այդ տարածքների ջրազերծումից հետո, որը կիրականացնի բացահանքի շինարարական աշխատանքներին զուգահեռ՝ տեղամասի

եզրագծերի երկայնքով առկա դրենաժային առուների միջոցով:

Նորամարգի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի Ռեսուրս տեղամասի մակաբացման ապարների ծավալը կկազմի 262.3 հազ.մ^3, որոնք ներկայացված են հողաբուսական, կավային, կավավազային առաջացումներով:

Բացահանքի մատակարարումը տեխնիկական ջրով նախատեսվում է կատարել օգտակար հանածոյի հանութաբարձման աշխատանքների ժամանակ փոշենստեցման, աշխատանքային հրապարակների, ճանապարհների ջրցանման նպատակով: Տեխնիկական ջրամատակարարումը կիրականցվի КамАз АСРТ-10 մակնիշի ջրցանվող մեքենայով, խմելու ջրի մատակարարումը՝ ВЦ-1.2 մակնիշի ջրի ցիստեռնով:

Բացահանքում օգտակար հանածոյի արդյունահանման տեխնոլոգիաների հետ կապված մթնոլորտ արտանետվող վնասակար գազերի և փոշու աղբյուր կհանդիսանան տրանսպորտը և մաքրահանութային աշխատանքները: Օդային ավազան արտանետվող վնասակար նյութերը կլինեն անօրգանական փոշին (բուլդոզերային, էքսկավատորային, տրանսպորտային, լցակույտ), ազոտի ու ածխածնի օքսիդները և ածխաջրածինները (դիզելային ու բենզինային վառելիքով աշխատող մեխանիզմներ):

Շահագործման ընթացքում կառաջանան նաև բնապահպանական տեսակետից տարբեր վտանգավորության թափոններ, որոնցից են սպառողական հատկությունները կորցրած կապարե կուտակիչներ՝ առանց էլեկտրոլիտի, բանեցված շարժիչների յուղերի թափոներ, յուղոտված լաթեր, բանեցված օդաճնշիչ դողեր, փխրուն մակաբացման ապարներ:

Թափոնների քանակի, վտանգավորության դասի, ծածկագրերի և կառավարմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությունը տրված է գնահատման հաշվետվությունում և հաշվետվությանը կից թափոնների կառավարման պլանում:

Համաձայն գնահատման հաշվետվության՝ բացահանքի շահագործման ընթացքում շրջակա միջավայրի բաղադրիչների (մթնոլորտային օդ, ջրային, հողային ռեսուրսներ, կենսաբազմազանության) վրա հնարավոր բացասական ազդեցության կանխարգելման, մեղմացման, նվազեցման նպատակով, հնարավոր վթարային իրավիճակների, բնական աղետների և անբարենպաստ օդերևութաբանական պայմանների և աղմուկի առաջացման դեպքերում նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության մեղմացմանն ու կանխարգելմանն ուղղված մշտադիտարկումներ:

Պատճառաբանական մաս. Արարատի Նորամարգի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի Ռեսուրս տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության փորձաքննությունն իրականացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի պահանջներին համապատասխան: Գնահատման և փորձաքննության փուլերում գործունեության իրականացման վերաբերյալ Նորամարգ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում անցկացվել են հանրային լսումներ, որոնց ընթացքում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, պաշտպանության, մշակույթի և սպորտի նախարարություններից, կադաստրի կոմիտեից, Արարատի մարզպետարանից, Մասիսի համայնքապետարանից:

Փորձաքննական գործընթացում համաձայն՝ շրջակա միջավայրի նախարարության ջրային ռեսուրսների կառավարման վարչության և «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ստացված տեղեկատվության՝ Արարատի մարզի Նորամարգի

ավազակոպճային խառնուրդի հանքավայրի Ռեսուրս տեղամասը, ըստ ներկայացված կոորդինատական կետերի գտնվում է ստորերկրյա ջրերի պահպանման գոտում, ինչը հաստատված է Կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 8-ի «Հրազդանի ջրավազանային կառավարման տարածքի 2022-2027 թվականների կառավարման պլանը հաստատելու մասին» №1909-Ն որոշմամբ:

Փորձաքննության ընթացքում կադաստրի կոմիտեի կողմից ստացված կարծիքի համաձայն և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացված լրացուցիչ ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ ընկերության կողմից ներկայացված կոորդինատներով տարածքն իր սահմաններում ներառում է Արարատի մարզի Մասիս համայնքի Նորամարգ և Ռանչպար բնակավայրերի վարչական սահմաններում ջրային նշանակության հողամասեր: Նշված հանգամանքները, առաջարկությունների և դիտողությունների հետ մեկտեղ ներկայացվել են ընկերությանը՝ ՇՄԱԳ հաշվետվությունը լրամշակելու նպատակով, սակայն ընկերության կողմից լրամշակված ՇՄԱԳ հաշետվությունում հաշվի չեն առնվել և չեն ներակայացվել տեղեկատվություն և պարզաբանումներ՝ ջրային նպատակային նշանակության հողերի հետ համընկնման, ստորերկրյա ջրերի պահպանման գոտում գտնվելու (դրանց վրա հնարավոր ազդեցությունները, կանխարգելման նպատակով բնապահպանական միջոցառումները) և հայցվող տարածքը երկու ազդակիր բնակավայրերում գտնվելու վերաբերյալ:

Հաշվի առնելով վերոնշյալ հիմնավորումները և հիմք ընդունելով «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և 30-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով սահմանված դրույթները, նախատեսվող գործունեության իրականացումը դիտարկվող տարածքում համարվում է ոչ նպատակահարմար:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ԷՄ ՋԻ ՓԻ ՌԵՍՈՒՐՍԻԶ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արարատի մարզի Նորամարգի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի Ռեսուրս տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական բացասական եզրակացություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պարտականությունները կատարող՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
գլխավոր մասնագետ՝ Նելլի Նասիբյան